



Մ ՈՒՐԲ Զ ԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ

ԽԱՉԿԵՐԱՅԷՆ ԵՏԲ ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ 6 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2024

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ	1
Մանուցումներ	Էջ	3
Ողորմութեան Կանչ Մը (Մար. 24)	Էջ	4

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (17.7-14)

Երբ այն օրը գայ, մարդը իր արարիչին միայն պիտի յուսայ, իր աչքերը Իսրայէլի սուրբ Աստուծոյն պիտի յառէ: Այլեւ իր յոյսը պիտի չկապէ մեհեաններուն կամ իր ձեռագործ չաստուածներուն: Մարդիկ միայն Իսրայէլի սուրբ Աստուծոյն պիտի յուսան: Այլեւ իրենց աչքերը պիտի չյառեն իրենց գարշելի չաստուածուհիին փայտէ արձանիկներուն:

Այն օրը քաղաքներդ պիտի լքուին եւ աւերուին, այնպէս՝ ինչպէս պարպուեցան ամորհացիներու եւ խեւացիներու քաղաքները իսրայէլացիներու յարձակումին դիմաց, քանի որ դուն լքեցիր զԱստուած, քու փրկիչդ, եւ մոռցար Տէրը, քու օգնականդ: Արդ, քանի որ քու տնկած պարտէզդ եւ ցանած սերմերդ օտար չաստուածներու նուիրուած են, ինչ որ ալ տնկես, եւ ցանածդ նոյն օրն իսկ ծաղկի՝ սակայն հունձքին արդիւնք պիտի չունենաս. այն օրը Աստուած հօր մը պէս իր ժառանգութիւնը պիտի բաժնէ, եւ դուն որպէս հատուցում՝ տրտմութիւն պիտի ունենաս:

Վա՛յ բոլոր այն ազգերուն որոնք ալեկոծ ծովու մը պէս Աստուծոյ դէմ կը մոլեգնին

եւ որոնք ալիքներու նման կը շառաչեն: Նոյնիսկ եթէ ծովերուն պէս անհամար ըլլան անոնք, ովկիանոսի ալիքներուն սաստկութիւնն իսկ ունենան՝ սակայն Աստուած պիտի ճզմէ ու ցրուէ զանոնք այնպէս՝ ինչպէս հովը կը քշէ յարդին շիւղը, ինչպէս մրրիկը կ'ալէ կառքերուն հանած փոշին:

Ողբ ու կոծով պիտի փակուի օրն իրենց, առաւօտը դեռ չբացուած՝ ա'լ գոյութիւն պիտի չունենան: Ահա ա'յս պիտի ըլլայ մեր յափշտակիչներուն, մեր կողոպտիչներուն վիճակուած ճակատագիրը:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐԻՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ (13.5-13)

Քննեցէ՛ք դուք ձեզ, տեսնելու համար թէ նոյն հաւատքին մէջ կը մնա՞ք: Փորձեցէ՛ք դուք ձեզ. Քրիստոսի ներկայութիւնը կը զգա՞ք ձեր ներսիդին, թէ պարզապէս իր անունը կը կրէք: Յուսամ գիտէք թէ մենք այդ փորձը յաջողապէս կատարած ենք: Եւ կը խնդրենք Աստուծմէ որ չարիք չգործէք: Ասիկա ըսելով չենք ուզեր մենք մեզ ընտիր ցոյց տալ. ընդհակառակը, կ'ուզենք որ դուք բարին գործէք, նոյնիսկ մեզ ամօթով ձգելու չափ: Որովհետեւ Աստուծոյ ճշմարտութեան դէմ ոչինչ կրնանք ընել, այլ կրնանք միայն անոր համար աշխատիլ: Ուրախութեամբ յանձն կ'առնենք տկարանալ, միայն թէ դուք զօրանաք: Ուստի կ'աղօթենք որ հետզհետէ

կատարեալ ըլլաք: Ասիկա հեռուէն կը գրեմ ձեզի, որպէսզի երբ գամ՝ պէտք չունենամ խստութեամբ վարուելու ձեզի հետ ա՛յն իշխանութեամբ որ Տէրը ինձի տուաւ ուղղելու համար եւ ո՛չ թէ պատժելու:

Կը փակեմ նամակս, եղբայրներ. ո՛ղջ եղէք: Կատարեալ ըլլալու աշխատեցէք. մխիթարուեցէք: Համերաշխ եւ խաղաղութեամբ ապրեցէք իրարու հետ, եւ այն ատեն խաղաղութեան ու սիրոյ Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ:

Սիրոյ համբոյրով ողջունեցէք զիրար: Այստեղի քրիստոնեաները կ'ողջունեն ձեզ:

Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, Աստուծոյ սէրը եւ Սուրբ Հոգիի հաղորդութիւնը ձեր բոլորին հետ ըլլան: Ամէն:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ
(11.27-33)**

Յիսուս եւ իր աշակերտները դարձեալ Երուսաղէմ եկան:

Մինչ Յիսուս տաճարին մէջ կը պտըտէր, իրեն մօտեցան քահանայապետները, օրէնքի ուսուցիչներն ու երէցները, եւ հարցուցին. «Ի՞նչ իշխանութեամբ կը կատարես այս բաները: Ո՞վ քեզի այդ իշխանութիւնը տուաւ»: Յիսուս անոնց պատասխանեց. «Լա՛ւ, ձեզի պիտի ըսեմ թէ ինչ իշխանութեամբ կ'ընեմ ասոնք, եթէ դուք ալ իմ հարցումիս պատասխանէք: Յովհաննէսի մկրտելու իշխանութիւնը

Աստուծմէ՞ տրուած էր իրեն թէ մարդոցմէ: Պատասխանեցէք տեսնեմ»:

Անոնք սկսան իրարու միջեւ խորհիլ եւ ըսել. «Եթէ ըսենք՝ Աստուծմէ տրուած էր, մեզի պիտի ըսէ թէ ինչո՛ւ չհաւատացիք իրեն. իսկ “մարդոցմէ էր” չենք կրնար ըսել»: Այսպէս կ'ըսէին՝ ժողովուրդէն վախնալով, որովհետեւ ամէն մարդ գիտէր թէ Յովհաննէս ճշմարտապէս մարգարէ էր: Ուստի պատասխանեցին Յիսուսի. «Ձե՛նք գիտեր»: Յիսուս ալ իրենց հարցումին պատասխանելով ըսաւ. «Այն ատեն ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ի՛նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները»:

**Այօճելեօ՛՛ք ԵԿԵՂԵՑՈՅՍ
ԴԻԱՍԵՏՐԻ ԷՁԸ
ԵՒ ՁԵՐ ՀՁԻԱՆՈՒԹԻՒՄԸ յԱՅՏԵՑԵՑԷ
(like).
www.facebook.com/SourpHagopChurchMontreal**

**Այօճելեօ՛՛ք
Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑՈՅ ԿԱՔԷՁԸ՝
www.sourphagop.net**

**Այօճելեօ՛՛ք
Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑՈՅ YouTube կայան՝
ՓԱՏՆԵԼՈՎ
Sourp Hagop Armenian Church**

**ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՄԵՐՈ
ԱՆԽՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՑԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՑՈՅ ԳՐԱՏԵՆԵԱՆ՝
514 331 5445 x202 ԹԻՒՆ**

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ

Գառնիկ Ա. Բ. Գ.ի

«Սաղմունքներ Վասն Առաել Կեանքի»

Տետրը

Մոնթրեալ, 2024

*

Տետրը կարելի է վերցնել
Շաբաթ, 12 Հոկտեմբեր 2024-ի
Թարգմանչաց Տօնին Նուիրուած
Ս. Պատարագի աւարտին՝
երեկոյեան ժամը 8.00-ին;
Կարելի է PDF-ը ունենալ՝
դիմելով ենակի հետևեալ հասցէին.
eglise@sourphagop.net



«ՆՈՐ ԾԱՂԻԿ»
ՄԱՆԿԱԳԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԻ
2024-2025 ՏԱՐԵՇՐՉԱՆ

«Նոր Ծաղիկ» Մանկապատանեկան երգչախումբը
իր փորձելուն վերականգնելու համար, 4 հոկտեմբեր 2024-ին
Փորձերը՝ ամեն Ուրբաթ ժամը 4:30-5:45:
Վայր՝ Ս.Յանկոյր Առաջնորդանիստ Սուրբ Եկեղեցւոյ Կարնատուն:
Խորախար՝ տիկ. Գոհար Մանուկեան:
Վեջնակոմսար՝ տիկ. Կարապետյան-Գալլուղեան:
Արձանագրուելու համար հեռաձայնել՝
Իրլ ցլին 7-ին Զիֆրճեան-Գոյունեանին. 514-934-6174



ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ ՄԸ ԱՊՈԹԵՆԵՐ ԾԷՆՈՒԲԵՆ

ՀԵՊԻԱԿ՝ ՀԷՆՐԻ ՆՈՒԸՆ

ԹԱՐԳԱՆՈՒԹԻՒՆ՝ ԿԱՐՕ ՄՐԿ. ՆՈՒՈՒՏԵԱՆԵՐ

ԲԱՐԿՈՒԹԻՒՆ

Ով քաղցր Տէր, այսօր զգացի բարկութեանս խեղդիչ ուժը: Մնացի բանտուած մոլեգին, չարական զգացումներով՝ մարդոց նկատմամբ որոնք իրենց խոստացածը չէին կատարած, եւ մտքիս մէջ շարունակեցի հնարել բարկութեան խօսքեր ու վրիժալից պարսաւներ: Թէեւ շա-

րունակեցի փորձել դէպի քեզ ուղղել ինքզինքս, բայց չգտայ ոչ մէկ ելք այս զգացումներէն: Անդադար ինքզինքս գտայ զայրոյթիս կեղրոնը եւ ոչինչ կրցայ ընել բացի մոլեգնութիւնս քեզի ներկայացնելէ: Տեսայ ինչպէս ցատումս ի յայտ բերաւ այն՝ թէ տակաւին որքան այս աշխարհին, անոր խոստումներուն ու հատուցումներուն կը պատկանիմ: Նոյնիսկ գիտակցեցայ թէ համեմատութիւն չկայ ներքին իմ խռովքիս եւ զայն խթանող արտաքին պատահարներուն միջեւ: Բայց չէի կրնար բարկութիւնս վրայէս նետել:

Ահա խոնարհած եմ առջեւդ Տէր, գիտակից՝ թէ որքան կը վստահիմ շնորհքիդ, որպէսզի հասնիմ իմ տենչացած հեզութեան եւ սրտի ազնուութեան: Հիմա շատ աւելի հանդարտ կը զգամ, մանաւանդ երբ թուղթին յանձնեցի բարկացած զգացումներէս ոմանք: Բայց, Տէր, զիս շատ յաճախ մի՛ փորձեր: Կ'ուզեմ նուազ ճաշակել բարկութիւնս, եւ աւելի՛ քու քաղցրութիւնդ ու սերդ: Սրտիս խաղաղութիւն պարզեւ: Ամեն:

(Շար. 24)

ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐՈՒ ՏՕՆ

Ս. ՊԱՏԱՐԱԳ

Շաբաթ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2024

Երեկոյեան ժամը 7.00-8.00

Երգեցողութեամբ՝ Արական Երգչախումբին

